

գանձենք Քիւրդական ցեղերու Մարական կորիզը, շատ բնական կը լինի հետեւի Հայ ու Քիւրդ նախնիներու պատմական յարաբերութիւններուն՝ ըստ Խորենացոյ պատմութեան :

Մեր պրպտումներու մէջ, այս երկու տարբեր ցեղերու — Հայերու ու Մարերու իրարու հանդէպ ունեցած բարեկամական ու թշնամական վերաբերմունքի մասին՝ չփումներու պատմականը հաւաքեցինք, որոնցմէ հանած ամեն մէկի եզրակացու թիւնն է որ կու տանք, հետն առած և աւանդալէսերը :

Հայերու եւ Մարերու առաջին հանդիպումին. — Երբ Հայերը կը տարածուին Բդնունեաց ծովի շրջաններէն և կը մօտենան Մարաստանի, Մարերը կը դառնան արեւուղ եւ հարկաւոր (յալթող) :

Հարմայի որդի Արամի ժամանակ. (1300). — Մարը պատերազմաւոր է և ասպատակ. յաղթուած ու պատժուած Հայերէ. որմէ յետոյ յարաբերութիւնները կ'ըլլան բարեկամական՝ հիմնուած անտեսական հողի վրայ, գաղթականութեան մուտքը Հայերի մէջ առիթ կը լինի այդ բարեկամութեան, և գուցէ անուղղակի ձուլումներ կը կատարուին Հայութեան մէջ :

Մարաց Կիւֆար Ա. ի օրով. — «Մարերն ու Հայերը բարեկամ են ու դաշնակից :

Կիւրոսի ժամանակ (558). — Հայերը կը պատերազմին, կը յաղթանակեն, ու Մարական Նախարարութիւնը կը կազմուի Հայաստանի մէջ :

Արեակունեաց քաղաւորութեան սկզբին. — Կ'երեւի որ կան զանազան հոլերու վրայ անջատ անջատ իշխանութիւններ, պետական հանրային կազմի մը գաղափարը տկար է. թագաւորութեան հաստատութեամբ՝ առանձնաշնորհներու րաշխումի միջոցաւ՝ եթէ անոնք բոլորովին չեն ջնջուիր, բայց իրենց գոյութիւնը կը լուծեն քիչ քիչ թագաւորական միակ իշխանութեան մը մէջ. ատոնցմէ րացաւորութիւն չի կազմեր նաեւ Մուրացան իշխանութիւնը, որուն թէև կը տրուի երկրոր-